2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ բնութագիրը[1]

ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 154.7 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 139 մլրդ դրամ, որոնք ապահովել են ՀՀ կառավարության կողմից հաստատված եռամսյակային ծրագրի համապատասխանաբար 103.4 եւ 78.9 տոկոսը: Պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 21.1%-ով, ծախսերի գծով՝ 18.3%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 23.2%-ով կամ շուրջ 29.2 մլրդ դրամով[2]: Ընդ որում, 31.7 մլրդ դրամով ավելացել են հարկերը եւ տուրքերը, 1.9 մլրդ դրամով՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, իսկ պաշտոնական դրամաշնորհները եւ այլ եկամուտները (նախկինում՝ ոչ հարկային եկամուտներ) նվազել են համապատասխանաբար 198.1 մլն դրամով եւ 4.2 մլրդ դրամով: Արդյունքում՝ եկամուտների կազմում 6 տոկոսային կետով աճել է հարկերի եւ տուրքերի տեսակարար կշիռը, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարների եւ այլ եկամուտների տեսակարար կշիռները նվազել են համապատասխանաբար 1.7 եւ 4.1 տոկոսային կետով: Մասնավորապես, պետական բյուջեի ընդհանուր եկամուտների 79.6%-ը ձեւավորվել է հարկային մուտքերի հաշվին, պետական տուրքը կազմել է բյուջեի եկամուտների 3.1%-ը, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 13.8%-ը, այլ եկամուտները՝ 3.5%-ը: «Հայաստանի Հանրապետության 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետին համապատասխան պետական բյուջեում ներառվել են նաեւ պետական հիմնարկների արտաբյուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 3.1 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 2.4 մլրդ դրամի դիմաց:

2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտները կազմել են ավելի քան 123.2 մլրդ դրամ եւ 104.4%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը եւ 21.4%-ով՝ տարեկան ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 33.8%-ով կամ 31.1 մլրդ դրամով[3]: Ընդ որում, գրեթե բոլոր

---

[1] Պետական բյուջեի եկամուտներում, ծախսերում եւ պակասուրդի ֆինանսավորման աղբյուրներում ներառված չեն արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող նպատակային ծրագրեր իրականացնող գրասենյակներով շրջանառվող միջոցները:

[2] 2008 թվականից ՀՀ պետական բյուջեն կազմվել է «Պետական ֆինանսների վիճակագրություն-2001» (GFS-2001) ձեռնարկի դասակարգմանը համապատասխան, նաեւ պետական բյուջեում ներառվել է ՀՀ սոցիալական ապահովագրության պետական հիմնադրամի բյուջեն, ուստի նախորդ տարվա հետ համեմատություններում հաշվի են առնվել նշված փոփոխությունները:

[3] 2008 թվականի հարկային եկամուտներում ներառվել են հանքարդյունահանման լիցենզառուների եւ հանքարդյունահանման հատուկ լիցենզառուների կողմից վճարվող ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, որոնք նախկինում հաշվառվում էին որպես ոչ հարկային եկամուտներ, հետեւաբար 2007 եւ 2008 թվականների ցուցանիշների համադրելիության նպատակով 2007 թվականի ցուցանիշներում նույնպես կատարվել են համապատասխան փոփոխություններ:

հարկատեսակների գծով արձանագրվել են աճի բարձր տեմպեր, բացառությամբ պարզեցված հարկի:

Ավելացված արժեքի հարկը կազմել է շուրջ 63.9 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 51.8%-ը: Նշված գումարից 38.43 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 25.43 մլրդ դրամը՝ ապրանքների եւ ծառայությունների ներքին շրջանառությունից: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջե մուտքագրված ԱԱՀ-ն աճել է 43.3%-ով կամ 19.3 մլրդ դրամով: Ընդ որում, ավելացել են եւ՛ ներմուծումից, եւ՛ ներքին շրջանառությունից ստացվող գումարները:

Առաջին եռամսյակում ակցիզային հարկի մուտքերը կազմել են ավելի քան 10 մլրդ դրամ՝ ապահովելով հարկային եկամուտների 8.1%-ը: Մասնավորապես, հանրապետություն ներմուծված ենթաակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 6.8 մլրդ դրամ, որից 3.2 մլրդ դրամը՝ բենզինի եւ դիզելային վառելիքի, 2.6 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծումից: Հանրապետությունում արտադրվող ենթաակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 3.2 մլրդ դրամ, որից 1.6 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 17.8%-ով կամ ավելի քան 1.5 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է տեղական արտադրության ծխախոտի իրացման եւ ծխախոտի ու բենզինի ներմուծման գծով մուտքերի աճով: Ակցիզային հարկի աճ է արձանագրվել նաեւ ալկոհոլային խմիչքների ներմուծումից եւ տեղական արտադրության խմիչքների իրացումից:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտների 16.3%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով ավելի քան 20.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա համեմատ շահութահարկի մուտքերն աճել են 29.8%-ով կամ 4.6 մլրդ դրամով, որը հիմնականում պայմանավորված է ոչ պետական, այդ թվում՝ օտարերկրյա ներդրումներով կազմակերպությունների, ինչպես նաեւ ֆինանսավարկային կազմակերպությունների վճարումների եւ նվազագույն շահութահարկի վճարման պահանջից ելնելով՝ մեկ տոկոս դրույքաչափով վճարված շահութահարկի աճով:

2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե մուտքագրված եկամտահարկը կազմել է շուրջ 10.8 մլրդ դրամ, որը 27.3%-ով կամ 2.3 մլրդ դրամով գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Աճի հիմնական աղբյուր են հանդիսացել աշխատանքային եւ քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված եկամուտները:

Հաշվետու ժամանակահատվածում զգալի աճ է արձանագրվել նաեւ մաքսատուրքի գծով: Այն կազմել է շուրջ 6.4 մլրդ դրամ՝ 42.7%-ով կամ 1.9 մլրդ դրամով գերազանցելով 2007 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը եւ ապահովելով պետական բյուջեի հարկային եկամուտների 5.2%-ը:

Գործունեության առանձին տեսակներից գանձված հաստատագրված վճարները կազմել են շուրջ 4.2 մլրդ դրամ՝ 6.3%-ով կամ 245.7 մլն դրամով գերազանցելով 2007 թվականի առաջին եռամսյակի համապատասխան ցուցանիշը: Այն հիմնականում պայմանավորված է տրանսպորտային միջոցների գազալցման, առեւտրային գործունեությունից, հանրային սննդի ոլորտներից եւ առեւտրի իրականացման վայր կազմակերպելու գործունեությունից ստացված մուտքերի աճով: Միաժամանակ նվազել են վիճակախաղերի կազմակերպման, բենզինի եւ դիզելային վառելիքի մանրածախ վաճառքից, ինչպես նաեւ տրանսպորտային գործունեության ոլորտներից գանձված գումարները:

2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 1.8 մլրդ դրամ պարզեցված հարկ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այն նվազել է 15.5%-ով կամ 330.1 մլն դրամով:

Բնօգտագործման եւ բնապահպանական վճարներից պետական բյուջեի մուտքերը կազմել են շուրջ 2.1 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն ավելացել են 46.8%-ով կամ 661.6 մլն դրամով՝ պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման վճարների, ինչպես նաեւ ավտոմեքենաներից արտանետվող վնասակար նյութերի համար գանձված վճարների ավելացմամբ:

2008 թվականի հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 4.1 մլրդ դրամ այլ հարկեր: Մասնավորապես, 2.7 մլրդ դրամ են կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին եւ կոնցեսիոն վճարները, 522.8 մլն դրամ՝ ճանապարհային վճարները, 559.4 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 201 մլն դրամ՝ «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները եւ 97.4 մլն դրամ՝ ՀՀ կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման եւ սոցիալական զարգացման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա համեմատ այլ հարկերն ավելացել են 28.5%-ով կամ 903.9 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված վճարումներով, միաժամանակ նվազել են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի խախտման համար սահմանված տուգանքները:

Պետական տուրքի գծով բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 4.8 մլրդ դրամ եւ 97.6%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական տուրքն աճել է 13%-ով կամ 549.4 մլն դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է գործունեության որոշ տեսակների լիցենզավորման եւ դատարան տրվող հայցադիմումների ու գանգատների, ինչպես նաեւ օդային տրանսպորտի միջոցով ֆիզիկական անձանց ելքի համար գանձվող տուրքերի աճով:

2008 թվականի առաջին եռամսյակում պարտադիր սոցիալական ապահովության վճարներից բյուջետային եկամուտները կազմել են շուրջ 21.3 մլրդ դրամ եւ 95.5%-ով ապահովել եռամսյակային ծրագիրը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 9.7%-ով կամ շուրջ 1.9 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում նախորդ տարվա 216.6 մլն դրամի դիմաց ստացվել են 18.5 մլն դրամի պաշտոնական դրամաշնորհներ, որոնք մուտքագրվել են պետական հիմնարկների արտաբյուջետային հաշիվներին:

Պետական բյուջեի այլ եկամուտները 2008 թվականի առաջին եռամսյակում կազմել են ավելի քան 5.4 մլրդ դրամ եւ ապահովել 123.5% կատարողական: Բարձր կատարողականը հիմնականում պայմանավորված է բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից եւ դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի եւ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարների ծրագրի գերազանցմամբ: Նշված եկամուտները կազմել են համապատասխանաբար 927.3 մլն դրամ՝ նախատեսված 37.2 մլն դրամի դիմաց, 500.1 մլն դրամ՝ նախատեսված 70 մլն դրամի դիմաց եւ 222 մլն դրամ՝ նախատեսված 102.1 մլն դրամի դիմաց: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտները նվազել են 43.5%-ով կամ 4.2 մլրդ դրամով: Վերջինս պայմանավորված է 2007 թվականին «Արմենտել» ՓԲԸ-ի հետ կնքված հաշտության համաձայնությամբ վճարված գումարով, որը կազմել էր 4.6 մլրդ դրամ: Առանց նշված գումարի 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 8.8%-ով կամ 438.1 մլն դրամով, որը հիմնականում պայմանավորված է իրավախախտումների համար կիրառվող պատժամիջոցներից մուտքերի, բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից եւ դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների եւ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ծախսերի նկատմամբ եկամուտների գերազանցումից մուտքերի աճով:

2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 139 մլրդ դրամի ծախսեր: Մասնավորապես, 133.9 մլրդ դրամ կազմել են ընթացիկ ծախսերը, 5 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Ինչպես նշվել է, պետական բյուջեի ծախսերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 78.9%-ով, ընդ որում, տնտեսումների կեսից ավելին բաժին է ընկել ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունների գծով ծախսերին:

Անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 29%-ով կամ 31.3 մլրդ դրամով:

Ընթացիկ ծախսերի եռամսյակային ծրագիրը կատարվել է 89.2%-ով: Ընթացիկ ծախսերից 11.5 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը՝ կազմելով ծրագրի 92.8%-ը: 897.5 մլն դրամ է տրամադրվել պարտադիր սոցիալական ապահովության վճարներին: Ծառայությունների եւ ապրանքների ձեռքբերմանը պետական բյուջեից հատկացվել է 24.8 մլրդ դրամ, որը կազմել է ծրագրի 85.4%-ը: Հաշվետու ժամանակահատվածում 2.9 մլրդ դրամ է հատկացվել պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով եռամսյակային ծրագրի 99.7%-ը: Մասնավորապես, 2.1 մլրդ դրամ տրամադրվել է

ներքին, 824.7 մլն դրամ՝ արտաքին պարտքի սպասարկմանը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 41.7%-ով՝ պայմանավորված ներքին պետական պարտքի սպասարկման ծախսերի աճով: Անցած եռամսյակում պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 4 մլրդ դրամ սուբսիդիաներ՝ կազմելով ծրագրի 83.1%-ը: 2008 թվականի առաջին եռամսյակում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 12.6%-ը կամ 16.8 մլրդ դրամ կազմել են դրամաշնորհները, որից 5.2 մլրդ դրամը (նախատեսվածի 91%-ը) տրամադրվել է համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաների ֆինանսավորմանը:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ծախսերի 35.8%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին եւ կենսաթոշակներին, որոնք կազմել են 49.7 մլրդ դրամ կամ եռամսյակային ծրագրի 96.4%-ը: Մասնավորապես, 38.6 մլրդ դրամ է տրամադրվել կենսաթոշակներին, 11.2 մլրդ դրամ՝ նպաստներին:

2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են ավելի քան 5 մլրդ դրամ կամ ծրագրի 19.5%-ը: Մասնավորապես, 8.7 մլրդ դրամ են կազմել ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը եւ ավելի քան 3.6 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը: 2007 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը նվազել են 19.8%-ով:

2008 թվականի առաջին եռամսյակում ՀՀ պետական բյուջեն (առանց արտաքին աղբյուրներից ֆինանսավորվող վարկային ծրագրերի գծով միջոցների ներհոսքի) կատարվել է 15.8 մլրդ դրամ հավելուրդով՝ նախատեսված 26.4 մլրդ դրամ պակասուրդի դիմաց: Ընդ որում, ֆինանսավորման ներքին աղբյուրները կազմել են -14.8 մլրդ դրամ՝ նախորդ տարվա -11.4 մլրդ դրամի դիմաց, իսկ արտաքին աղբյուրները՝ -1.0 մլրդ դրամ՝ նախորդ տարվա -6.4 մլրդ դրամի դիմաց: Պակասուրդի ֆինանսավորման ներքին աղբյուրներում 10.3 մլրդ դրամ են կազմել փոխառու միջոցներից (արժեթղթերից) զուտ մուտքերը: Շուրջ 25.1 մլրդ դրամով ավելացել են ազատ բյուջետային միջոցները:

2008 թվականի առաջին եռամսյակի ընթացքում ՀՀ պետական բյուջեից կատարված վարկավորումը կազմել է 5.4 մլրդ դրամ, որը տրամադրվել է ԼՂՀ-ին: Այն 25.3%-ով գերազանցել է նախորդ տարվա նույն ցուցանիշը:

Արտաքին պարտավորությունների մարմանը հաշվետու ժամանակահատվածում ուղղվել է ավելի քան 2 մլրդ դրամ, որից 1.7 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գծով պարտքի մարմանը, 374.2 մլն դրամը՝ ԱՄՆ ապրանքային վարկի մարմանը: